ՇՈՂԻԿ ՈՍԿԱՆՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑԸ ԵՒ ԴՊՐՈՑԸ

ԺԹ դ. 70-80-ական թվականները հայ ժողովրդի կյանքում նշանավորվեցին որպես վերելքի փարիներ: Ազգային զարթոնքը զգացվում էր կյանքի բոլոր բնագավառներում՝ դպրոց, եկեղեցի, թատրոն, երաժշտություն, գրականություն, մամուլ, որոնք գործիչներ էին պահանջում: Եւ այդ պահանջն իսկապես առաջ քաշեց մտավորականների մի փայլուն համաստեղություն (Ղ. Ալիշան, Մ. Խրիմյան, Ն. Վարժապետյան, Գ. Սրվանձտյանց, Ն. Ջորայան, Մ. Մամուրյան, Գր. Չիլինկիրյան, Գր. Օտյան, Մ. Օրմանյան Հ. Լիմոնճյան, Տ. Զուխաջյան, եւ այլք), որոնք չէին կարող սահմանափակվել գործունեության միայն մեկ՝ թեկուզեւ կարեւորագույն բնագավառով: Ուստի նրանք գործում էին եւ՛ գրականության, եւ՛ երաժշտության, եւ՛ մանկավարժության, եւ՛ լրագրության, եւ՛ հոգեւոր ասպարեզներում: Այս տեսակետից առանձնապես արդյունավետ էր Ալիշանի, Խրիմյանի, Սրվանձտյանցի, Խորեն Ստեփանեի, Մամուրյանի, Չիլինկիրյանի եւ այլոց գործունեությունը: Նրանք նպատակ էին դրել ոչ միայն լուսավորել ազգը, այլեւ հիմնել դպրոցներ, տպարաններ: Դրա համար նրանք նախ աշխատել են որպես ուսուցիչ, ապա նաեւ որպես գրող, բարձրասրտիճան հոգեւորական ու լրագրող՝ քաջ գիտակցելով, որ ժողովրդի ազգային ինքնագիտակցության ճշմարիտ ուղին լուսավորությունն ու դպրոցն է:

Գարեգին Սչվանձտյանցը հոգեւոր առաջնորդի, խմբագրի, ուսուցչի, դպրոցավարի, հասարակական գործչի դժվարին ու պատասխանատու աշխատանքին զուգահեռ փարիներ շարունակ ինքնամոռաց նվիրումով զբաղվել է գիտական լուրջ գործունեությամբ, որոնել ու գտել, հավաքել ու գիտական համակարգի է բերել բանագիտական, ազգագրական, հայրենագիտական եզակի արժեք ունեցող նյութեր:

Գ. Սրվանձտյանցի գրական ժառանգության մեջ մանկավարժական - գիտամեթոդական բնույթի աշխատություններ չկան: Սակայն նրա բոլոր ստեղծագործություններն առանձին վերցրած բանագիտական, հայրենագիտական, բանահյուսական ճանաչողական արժեքներից բացի ունեն նաեւ դաստիարակչական եւ ուսուցական վիթխարի նշանակություն: Ներծծված լինելով լուսավորության եւ դաստիարակության առողջ ու կենսունակ գաղափարներով, տոգորված ջերմ հայրենասիրությամբ ու ժողովրդայնությամբ, ազգային ինքնության եւ հասարակական-քաղաքական կյանքի առաջընթաց զարգացումը «ազգային դպրոցաց» բարեկարգությամբ պայմանավորող գաղափարաբանությամբ, դրանք բոլոր ժամանակներում՝ առավել եւս մեր օրերում, մատաղ սերնդի եւ երիտասարդության բարոյական դաստիարակության հրաշալի դասագրքեր են: Այսուհանդերձ նրա մանկավարժական, դպրոցավարական եւ լուսավորական գործունեությունը առ այսօր ըստ ամենայնի չի լուսաբանվել, գիտական համակարգված վերլուծության չեն ենթարկվել մեծ լուսավորչի մանկավարժական հայացքները, նրա գրական ժառանգության մանկավարժական ուղղվածությունը, որով, անշուշտ, կամբողջացվի բազմաժանր ստեղծագործողի դիմանկարը:

Գ. Սրվանձտյանցի մանկավարժական հայացքները, լուսավորության տարածման եւ դպրոցի դերի բարձր արժեւորումը, մասնավորապես բացահայտվում են ինչպես «Ազգա-

յին լուսաւորութեան եւ դաստիարակութեան վրայ[11]» ճառում, այնպես էլ «Ժառանգաւորաց վարժարան ի Սուրբ Կարապետի վանքս», «Տգէտներ եւ գրգիռութիւն», «Վարժարան եւ վարժապետ», «Սուրբ Կարապետի վանք եւ իւր վիճակ, հարիւր գեղին մէկ դպրոց»[22] հոդվածներում եւ նրա մյուս գործերում:

Լուսավորիչ-մանկավարժը քաջ գիտակցում էր, որ փոխվել են ժամանակները, պետք է փոխել նաեւ կրթության ու դաստիարակության բովանդակությունը, բնույթը: Արեւմտահայությունը ապրում էր զարթոնքի շրջան, ուրեմն նրա առջեւ կանգնած էին նոր խնդիրներ, որոնց գլխավոր նպատակը պետք է լիներ ազգային անկախության ձեռքբերումը: Մեծ հայրենասերը պահանջում էր դաստիարակության նպատակը եւ ուղղությունը բխեցնել այդ կարեւոր պահանջից, որպեսզի այն ծառայի հայ ժողովրդի ազատասիրական ու հայրենասիրական ձգտումներին: «***Ժողովուրդ մը***,- գրում է նա,- **եթէ կուզէ նաեւ իր որդիք եւ իրենց անձինք բանդերէ, կապանքներէ, տուգանքներէ, հարստահարութենէ, դու ասա՛ նաեւ աղքատութենէ ու հիւանդութենէ ազատ պահել, պէտք է դպրոցներ ունենայ. ուսեալ ժողովուրդ, դաստիարակեալ ժողովուրդ, միշտ ազատ կապրի, պատուով կապրի, հարուստ ու առողջ կապրի, հանգիստ եւ գոհ սրտիւ կապրի**»[33], որովհետեւ ազատ ու անկախ է այն ժողովուրդը, որն ունի խորհուրդ, գիտություն, լեզու, գիր, արհեստ ու արվեստ, որոնցով ձեռք է բերում ազգային արժանապատվություն եւ ինքնություն, իսկ այս ամենը ունենալու միջոցը, դրան հասնելու ճշմարիտ ուղին դպրոցն է. այո՛ «**ուսումնարանները, որոց մէջը պատսպարուեն նոր սերունդին հայր ու մայր**»:

Գ. Սրվանձտյանցը դպրոցը համարելով «**մարդկութեան, ազգութեան մեծ եւ միակ ընտանիք կազմող, գեղեցիկ ընկերութիւն**»՝ պահանջում է այն պահպանել հենց նույն մարդասիրական սկզբունքներից ելնելով, քանի որ դա հնարավորություն է տալիս սովորեցնել մարդկանց իրենց իրավունքներն ու պարտավորությունները՝ ապահովելով սերունդների հոգու եւ մտքի զարգացումը, հետեւաբար «... **մեր ազգին համար այսօր եւ ամեն ժամանակ առաջին գործը դպրոց պէտք է ունենալ. դպրոցները արդիւնաւորել գիտենալ: Այս աւուր մանկունք՝ վաղուան հայրեր պիտի ըլլան, եւ աղջկունք՝ մայրեր: Ազգիս մօտաւոր ապագան են անոնք, ապագայ՛, որում այնչափ յուսալիր եւ խանդակաթ աչօք կը նայի մեր Ազգ, մեր Ազգ, որ կորուսեր է իրեն փառաւոր անցեալը եւ չունի մխիթարական ներկայ մը**»[44]:

Անվանի մտավորականը, ըստ ամենայնի քննության է առնում ժամանակի կրթության դրվածքը, բացահայտում ընկերային այն վիճակը, որը խանգարում է ժողովրդական դպրոցների զարգացմանը: Շատ բնակավայրեր դպրոց չունեին, իսկ եղածներից շատերը զուրկ էին նյութական միջոցներից, որի հետեւանքով մի քանի տարի գործելուց հետո փակվում էին:

Մանրամասնորեն դիտարկելով արեւմտահայ դպրոցի առկա թերությունների վերացման հարցերը՝ Սրվանձտյանցը առաջին հերթին դրանց շարքին էր դասում դպրոցների պակասը, շենքային անհարմարությունները, հասարակուն եկամուտի բացակայությունը, գրագետ ուսուցիչների եւ դասագրքերի սակավությունը, սովորողների տնտեսական անհուսա-

1 ԳԱԹ, Սրվանձտյանցի Ֆ., Բ. 2, Գ. 65, էջ 30-35:
2 Տես **Գ. Սրվանձտյանց**, Երկեր, հ. 2, Եր., 1978:
3 ԳԱԹ, Սրվանձտյանցի Ֆ., բ. 2, գ. 65, էջ 30:
4 Անդ:

լի վիճակը, դպրոցի հանդեպ հասարակական գիտակցության, դպրոցական միասնական կանոնադրության բացակայությունը, անհոգությունն ու անտարբերությունը, ընտանիքի եւ դպրոցի կապի ծայրահեղ թույլ լինելը, ուսուցիչների նկատմամբ անհարգալից վերաբերմունքը եւ այլն: Հետեւաբար նա պահանջում էր ոչ միայն ծավալել դպրոցական ցանցը, այլեւ քաղաքակիրթ երկրների օրինակով կառուցել դպրոցական ճարտարապետության եւ առողջապահության բոլոր պահանջները բավարարող դպրոցական շենքեր, որոնք ամենից առաջ պետք է հարմարեցվեին երեխաների տարիքային առանձնահատկություններին, նպաստեին նրանց առողջության պահպանմանը, կառուցվեին այնպիսի անաղմուկ տեղերում, ուր օդը՝ մաքուր, ջերմությունը եւ լուսավորությունը ապահովված են: Ինչպես տեսնում ենք, Գ. Սրվանձտյանցը՝ որպես հմուտ դպրոցավար, առաջ է քաշում դպրոցական առողջապահության այնպիսի հարցեր, որոնք ժամանակին բարձրացրել էին նաեւ Խ. Աբովյանը, Ն. Զորայանը, Սերվիչենը եւ առաջադեմ այլ մանկավարժներ:

Արեւմտյան Հայաստանում դպրոցական գործը կազմակերպվում էր հանգանակություններով, աճուրդով, կտակներով, առանձին մարդկանց նվիրատվություններով եւ այլ միջոցներով: Այս հանգամանքը անկայուն վիճակի մեջ էր դնում ամբողջ դպրոցական գործը: Խիստ դժուժում էր հատկապես դպրոցը որակյալ ուսուցիչներով ապահովելու խնդիրը: Նման պայմաններում դպրոցը համալրվում էր կիսագրագետ, հաճախ նաեւ անգրագետ մարդկանցով: Այդ մասին փորձառու դպրոցավարն իրավացիորեն նկատում է. «Նախ՝ ընտրութիւն չեն ըներ լաւ վարժապետ մը ունենալու եւ պէտք եղածին չափ քանի մը հատ ունենալու: Վարժապետաց սպակ տալ, իբր աւելորդ եւ տուգանք տալ համարած են: Վարժապետը սպրուկին եւ ծառային տեղ դնելով վարած են հետը, եւ իրենց տղաքները իբրեւ իրենց գլխէն հեռանալու ու դպրոցին մէջ *էյլանմիշ* [ժամավաճառ՝ Շ.Ռ. (ընդգծումը՝ բնագրային)] ըլլալու համար դրկած են եղեր եւ ոչ թէ ուսմունք ու կրթութիւն սորվելու ...Անհոգ ազգի մը ոչ միայն վարժապետ, այլ ամեն կարգ պաշտօնապարն ալ անհոգի կը մնայ իր պաշտօնին: ...Գիտէ՞ք այսօր մեր ազգի մէջ գտնուած բոլոր վարժապետաց վիճակը կարեկցութեան արժանի է. աղքատ ու կարօտ են...»[5]:

Չնայած արեւմտահայության ազգային գիտակցության զարթոնքին եւ լուսավորության ծավալման առաջընթացին՝ մասնագետ ուսուցիչներ պատրաստելու ուղղությամբ ԺԹ-70-80-ական թվականներին դեռեւս լուրջ աշխատանքներ չէին կատարվում: Թերեւս դա էր պատճառը, որ Գ. Սրվանձտյանցը քննադատում էր ազգային մարմիններին այն բանի համար, որ ***«Ազգին ամէնէն կարեւոր պէտք եւ հոգը անփոյթ ըրած. երկրորդական երրորդական իրերը կհուզենք»:*** Մանկավարժական որակյալ կադրերի բացակայության պատճառով երբեմն դպրոց էին գալիս պատահական մարդիկ, որոնք հարմար գործ չգտնելով, սպանձնում էին ուսուցչի պատասխանատու պաշտոնը: Նման մարդիկ, փաստորեն, անտեղյակ մանկավարժական աշխատանքի դժվարություններին, ձեւերին ու մեթոդներին, մի քանի ամիս աշխատելուց հետո հեռանում էին դպրոցից՝ իրենց հետեւից թողնելով թշվառություն, ավերվածություն եւ տգիտություն. ահա թե ինչու «վարժարանը կմնայ անշէն, անուսուցիչ, եւ մանկտին անուսումն: Մնացեր են ու կմնան: Ըսել է թէ միշտ տղայ պիտի մնանք մեք: Այս երկու տարի է Մշոյ դաշտ կորեկ ու գըլգըլ ուտելով ալ կապրի. եթէ ցորեն չէ իր հացը, պէտք չէ՞ր ունենալ եւ ուտել կորեկն ու գըլգըլ»,- ցավով արձանագրում է

5 ԳԱԹ, Սրվանձտյանցի ֆ., բ. 2, գ. 65, էջ 30:

նա եւ եզրակացնում. **«Ուսմունքն ալ մտաց հացն է: Եթէ բարձր արուեստ ուսուցող չկայ. գոնէ սոսկ հայկարան թող լինի: Վերջապէս կըսենք, ինչպէս առանց սնունդի կեանք կմեռնի, այսպէս ալ առանց ուսման միտք մեռած է»**[61]:

Նմանատիպ փաստերով է բացատրում Գ. Սրվանձտյանցը ժամանակաշրջանի այն տխուր իրողությունը, որ **«վարժապետություն խիստ անարգ եղած է եւ վասն այնորիկ ընտիրներ ի բաց գնալով. անընտիր եւ զեղծ անձինք շատ տեղեր անցեր են այս պաշտօնին. որոց շնորհիւ ազգիս ներկայն կտատանի, ապագայն կկործանի»**[72]:

Այսուհանդերձ Գ. Սրվանձտյանցը լավատես էր եւ հավատում էր իր ժողովրդի լուսավոր ապագային, այն երջանիկ օրվան, երբ հայ ժողովուրդը կընդլայնի դպրոցական ցանցը, կպատրաստի գրագետ ուսուցիչների հզոր բանակ. «...իմաստնոց կաճառը, կանգնին, զինուին ահոյեան ընդդէմ տգիտաց եւ անբարեաց. ահա մեր փրկութեան օրն այն է. յաղթանակն անշուշտ է»[83]: Գ. Սրվանձտյանցը ուսուցչի մասնագիտական պատրաստությունը համազգային նշանակություն ունեցող գործ էր համարում: Նա խորապես համոզված էր, որ ուսուցչի պաշտոնը դժվարին է ու պատասխանատու, քանի որ **«...քաղքցիք, արհեստաւորք, ու ամեն կարգի պաշտօնատարք եւ գործաւորք, մեր Կաթողիկոսն եւ պատրիարք, առաջնորդն ու վարդապետ, տէրտէրն ու տիրացուն, միով բանիւ կղերն իր բոլոր կարգաւորներով, աշխարհականն իր բոլոր պարագաներով դպրոցէն կը ծնանին»**[94]: Գ. Սրվանձտյանցը չէր կարող բավարարվել ուսուցչի սոսկ նեղ մասնագիտական պատրաստվածությամբ: Ելնելով արեւմտահայության տնտեսական եւ քաղաքական պայմաններից, դպրոցները որակյալ, համայնագետ ուսուցիչներով համալրելու պահանջից՝ հանգում էր այն ճիշտ գաղափարին, որ «Մինակ ուսմունք գիտցող վարժապետը պէտք չէ ընտրել վարժապետ, այլ թէ կրնայ՞ նա Ազգի եւ Աստուծոյ համար ուսեալ եւ բարի ժողովուրդ մը պատրաստել... եթէ ծնողք բարեհաճեն ուսումնասիրութեան եւ բարոյականութեան օրինակ ըլլալ եւ իրենց տղաքներն ալ գոնէ 6-7 տարի շարունակ դպրոցը դրկել... դպրոցի մէջն ալ հարկաւոր ուսմանց հետ յատուկ կրօնական ազգային, եւ այլն, եւ այլն զանազան ճիւղերով պատմութեանց եւ կրթութեանց դասերը աւանդուին...»[106]: Նման ուսուցիչը հնարավորություն կունենար դասավանդելու մի քանի առարկա: Հասարակությունն էլ կկարողանար նյութապես ու բարոյապես աջակցել դպրոցին եւ ուսուցչին: Նրա պահանջն այն էր, որ ուսուցիչը զինված լինի **«տեսական ուսմունքով ու գործնական կարողութիւններով»**:

Մանրամասն քննության առնելով դաստիարակության հարցերը՝ Գ. Սրվանձտյանցը զարգացրել է մի շարք հետաքրքրական եւ ուսանելի մտքեր: Նա դաստիարակությունը սահմանել է հետեւյալ կերպ. **«Ես դաստիարակութիւն ըսելով կը հասկնամ տղայոց բարոյական կրթութիւնը, զոր ծնողք եւ վարժապետները պէտք է շատ փափուկ խնամքով ի գործ դնեն տղայոց համար»**:

Անվանի մտավորականը դաստիարակության ընդհանուր հարցերը լուծելու խնդիրը կապում էր ժողովրդի առաջավոր խավի հետ, դաստիարակության մեջ առաջ էր քաշում

6 **Գ. Սրվանձտյանց,** Երկեր, հ. 2, էջ 101:
7 Անդ, էջ 102:
8 Անդ, էջ 99:
9 Անդ, էջ 34:
10 Անդ, էջ 35:

ժողովրդայնության սկզբունքը, որի էությունն այն էր, որ կրթության եւ դաստիարակության ասպարեզում տեղ գտած թերությունների վերացման, դժվարությունների հաղթահարման գործում անհրաժեշտ է ներգրավել ժողովրդի լայն զանգվածներին:

Խ. Աբովյանի եւ Ն. Զորայանի նման Գ. Սրվանձտյանցը նույնպես դաստիարակության ու կրթության հարցերը լուսաբանում էր աշխատավոր ժողովրդին ծառայելու դիրքերից: Նրա համոզմամբ դաստիարակության նպատակը պետք է բխեցնել հասարակական ու անհատական շահերի միասնությունից: Նա քննադատում էր կրթության ու դաստիարակության սխալ դրվածքը, որը դրսեւորվում էր խոսքի ու գործի, տեսության ու գործնականի խզման մեջ եւ հանգում էր այն ճիշտ մտքին, որ երեխաներին պետք է հաղորդել այնպիսի գիտելիքներ, որոնք հիմնված լինեն ոչ միայն խոսքի, այլեւ փորձով ապացուցված եւ գործնականում ստուգված ճշմարտությունների վրա: Նա իրավացիորեն նկատում է, որ երեխաների բարի ցանկությունները, մանկական վառ հետաքրքրություններն ու ձգտումները ոչնչանում, խորտակվում են դաստիարակության արատավոր մեթոդների գործադրումով: Քննադատելով երեխայի անձնավորությունը նսեմացնող դաստիարակության տերբոդիկյան մեթոդները՝ անվանի մանկավարժը առաջադրում է բարոյական դաստիարակության այնպիսի եղանակներ ու միջոցներ, որոնք այսօր եւս կիրառելի են, չեն կորցրել իրենց արդիականությունը: Անդրադառնալով դպրոցական կարգապահության հարցերին՝ առաջին հերթին անհրաժեշտ էր համարում խուսափել չոր բարոյախոսությունից, անհամ եւ անիմաստ ճառերից ու խրատներից: Նրա կարծիքով դպրոցական կարգապահությունը նախ եւ առաջ պայմանավորված է ուսուցիչ-աշակերտ ճիշտ փոխհարաբերությամբ եւ ուսուցչի բարձր հեղինակությամբ: Դպրոցում պատշաճ կարգ ու կանոն հաստատելը կապված է ոչ այնքան խիստ պատիժների գործադրման, որքան երեխաների ուսումնական կյանքն ու աշխատանքային գործունեությունը ճիշտ կազմակերպելու հետ: Ահա թե ինչու նա ուսուցիչներին հորդորում էր. **«...սուր բայց սիրոյ աչքով հսկողութիւն ըլլայ փղոց շարժմանց ու վարմանց վրայ, դպրոցի մէջ պարապ չթողուլ, վասնզի ամէն մոլութիւն պարապութեան հետեւանքն է. բայց եւ ոչ այլ ձանձրացնել...»**[111]: Որպեսզի երեխան չձանձրանա եւ ուղեղի հոգնություն չունենա, բանագետ մանկավարժն առաջարկում էր. **«Հայրենի երգերով անոնց աշխոյժն ու բաղձանքը վառել դէպի ազնիւ զգացմունք եւ մտածմունք, եւ այլ շատ կերպեր որոնց մէկ քանիներուն գործադրութեան սկզբունքը արդէն սկսած ենք դպրոցի մէջ... »**[122]: Գ. Սրվանձտյանցը բարձր է գնահատում երեխայի վրա ուսուցչի եւ ծնողի անձնական օրինակի դաստիարակչական ներգործությունը: Ինչպես ծնողները, նույնպես եւ ուսուցիչներն իրենց աշխատանքով, անձնական կյանքով ու կենցաղով, վարք ու բարքով դրական օրինակ պետք է հանդիսանան երեխաների համար, որովհետեւ ի սկզբանե երեխաները հակված են բարուն եւ ոչ թե՝ չարին: **«Ծնողքն են աւելի փղայոց համար վարժապետ,- գրում է նա,- վասնզի ծնողաց հանցանք եւ վարմանց օրինակ շատ զգալի դաս է փղայոց, ինչպէս նաեւ վարժապետներուն ալ. այս բանն է, որ փղայքը կը զզվեցունէ կամ անոնց սիրել կուտայ իրենց ուսման ու դաստիարակութեան փունը, այն է վարժարանը»**[133]:

11 Անդ:
12 Անդ:
13 Անդ:

Անդրադառնալով ընտանեկան եւ դպրոցական դաստիարակության փոխհարաբերության հարցին՝ Սրվանձտյանցը ընտանեկան դաստիարակությունը համարում է սկիզբ՝ համամարդկային դաստիարակության համար: Ընտանիքը երեխայի դաստիարակության հիանալի դարբնոց է, որտեղ ձեւավորվում են մարդկային ամենավեհ հատկությունները: Ընտանեկան դաստիարակությունը պետք է կրի համակարգված եւ միասնական բնույթ, ընդորում, ընտանիքի բոլոր անդամները պետք է միասնական եւ համաձայնեցված մոտեցում ունենան երեխայի դաստիարակության գործում: Նա մեծ նշանակություն էր տալիս ընտանիքում երեխայի ստացած սկզբնական տպավորություններին, նրա նախասիրությունների արթնացմանը, դրական սովորույթների ու բարոյական կանոնների ամրապնդմանը. **«Եթէ դու հայհոյիչ ես, - գրում է նա,- տղան հայհոյիչ կըլլայ, եթէ գող, կամ ուրիշ կերպ ես, այնպէս կըլլայ նա. եւ եթէ պարկեշտ՝ պարկեշտ: Ասոր համար ծնողք իրենք զգոյշ ըլլալէն զկնի, պէտք է խիստ զգուշութիւն ընեն նաեւ որ իրենց վարժապետները ըլլան բարոյական մարդ, ու սնուցանեն եւ կառավարել գիտնան տղաքը սիրով. այնպէս որ տղան իր վարժարանն ու վարժապետ իր սիրած ամէն բանէն աւելի սիրէ»**[144]:

Բարոյական դաստիարակության մեթոդների շարքում Գ. Սրվանձտյանցը կարեւոր տեղ է տալիս բարոյախոսական զրույցներին, հեքիաթներին, առակներին, ասացվածքներին եւ բանահյուսական այլեւայլ նյութերին: Նրա պատկերացմամբ հեքիաթներն ու առակները ժողովրդական մանկավարժության լավագույն միջոցներն են, որոնց մեջ իրական կյանքից վերցված առատ նյութ կա՝ մարդկային եւ հասարակական հարաբերությունների ու երեւույթների մասին:

Գ. Սրվանձտյանցի առաջադրած մանկավարժական հիմնահարցերից մեկը կնոջ կրթության ու դաստիարակության խնդիրն է: Նա բարձր է գնահատում կնոջ դերը՝ թե՛ ընտանիքում, թե՛ հասարակական կյանքում: Նրա համոզմամբ ազգի առաջադիմության գլխավոր նախապայմաններից մեկը կնոջ ազատագրության, իրավահավասարության եւ նրա դաստիարակության ու կրթության լիարժեք ապահովումն էր: Արական վարժարաններից առավել Սրվանձտյանցի ուշադրության կենտրոնում մշտապես եղել են իգական վարժարանների հիմնադրումն ու բարգավաճումը: «Մեր ազգը, - գրում է նա,- պէտք է իր ամէն կերպ ազգային կառավարութենէն առաջինը ճանչնայ դպրոցը. **դպրոց աղջկանց եւ մանկանց**: Եւ եթէ այս մասին այսօր օրինաւոր կեդրոնական կառավարութիւնը չունի մեր ազգ յանուն ազգային լուսաւորութեան եւ դաստիարակութեան, մեծ պակասութիւն մի է»[151]: Նա հիացմունքով ոգեկոչում է այն ժամանակները, երբ մեր փառահեղ նախնիները այծի կաշին քերում, ամիսներով կոկում եւ տարիներով գրում էին, որի շնորհիվ ամեն տան մեջ սրբությամբ եւ մեծ ակնածանքով պահվում էին Աստվածաշունչը, Շարակնոցը: Եթե այսօր մենք հայ ենք, ապա մեր կյանքով ու անվամբ պարտական ենք նրանց: Նա վկայակոչում է Եղիշեին, որը պատմում էր իր ժամանակի հայ տիկնանց ֆիզիկական, բարոյական ու մտավոր կարողությունների մասին, քանզի **«Իրենց կերակուրը սուրբ գիրքն էր, եւ իրենց բերանի մրմունջը՝ սաղմոս: Այսպիսի մայրեր ու այնպէս զաւակներ էին Վարդանեան**

14 Անդ:
15 Անդ, էջ 31: Ընդգծումը՝ բնագրային:

հայեր: Երանի այն ազգին, որոյ մայրերը ուսեալ են անոնց զաւակներն ալ իրենց արգանդէն ուսեալ կը ծնուին»[162]**:**

Գ. Սրվանձտյանցի մանկավարժական հայացքներում առանձնահատուկ տեղ է հատկացվել դասագրքերի ստեղծման եւ հրատարակման հարցերին, քանի որ կրթության նոր բովանդակությունը պետք է արտացոլվեր համապատասխան ծրագրերում, հայտագրերում, դասագրքերում: 1866-ին լույս է տեսնում նրա երկու մասից բաղկացած «Նոր ընթերցարանը», որը լայն տարածում է գտնում արեւմտահայ դպրոցներում[173]: Այդ մասին նա սիրով արձանագրում է. «1866-ին երկու կտոր դասագիրք շինեցի այս ոճով տպագրեալ, որ շատ տեղերէ լաւ ընդունելութիւն գտաւ եւ շնորհակալութեան գիրեր ալ ստացայ ուսուցիչներէն»[184]:

«Նոր ընթերցարան»-ը կազմելիս Սրվանձտյանցը հրաժարվել է ավանդական սկզբունքներից, երբ դասագրքերում գերազանցապես տեղ էին գտնում կրոնաբարոյախոսական բնույթի պատմվածքներ, առակներ ու խրատներ: Դրանց փոխարեն նա պահանջում էր. **«Դասագիրքեր շինելու է ընտանեկան կեանքի նկարագրութիւն ընելով, ազգային սեփական սովորոյթները գրելով, եկեղեցական տօները եւ ծէսերը, իւրաքանչիւր գեղին, քաղաքին, գաւառին տեղագրութիւնները, անոնց մօտ եղած լերան, բլրին, ձորին... անունները, տեղերն ու ձեւերը ծանօթացնել մանկան... »**[195]**:** Այսօրինակ նյութերը ոչ միայն նպաստում էին երեխաների ճանաչողական հետաքրքրությունների զարգացմանը եւ բարոյական վարքագծի ձեւավորմանը, այլեւ նրանց գինում էին տեսական ու գործնական հմտություններով, որոնց շնորհիվ սովորողները ձեռք էին բերում ինքնուրույնություն, ազատ եւ անկաշկանդ ապրելու ձգտում՝ դառնալով երկրի լիարժեք քաղաքացիներ: Ինչպես հայտնի է, այդպիսի մոտեցում է ունեցել նաեւ հայ մեծ լուսավորիչ Խ. Աբովյանը՝ իր նշանավոր «Նախաշավիղ»-ում զգալի տեղ հատկացնելով բնության, կենդանական ու բուսական աշխարհն արտացոլող զվարճալի պատմվածքներին, առակներին ու զրույցներին:

«Ընթերցարան»-ի թե՛ կառուցվածքը եւ թե՛ բովանդակությունը միաժամանակ պատկերացում են տալիս Գ. Սրվանձտյանցի դիդակտիկական հայացքների մասին: Դասագրքի առաջաբանում ներհուն մանկավարժը մեթոդական ցուցումներ ու հրահանգներ է տալիս ուսուցիչներին՝ մասնավորապես մատնանշելով. **«Ասոնք մանկավարժական առարկաներ են: Օ՛, բուն այդ սրահէն, բուն այրէն սկսելու է արդէն ուղղութիւնը, որուն մեր ազգը կարեւորութիւն չտար. եւ չըտալով ալ կարող չլինիր գինքն ուղղել. չուղղելով կարող չլինիր յառաջ ընթանալ: Այո՛, ամէն բանը սկիզբէն, այրէն, մանուկէն, առաջին սրահէն ուղղելու ենք»**[201]: 1877 թ. Կ.Պոլսում լույս է տեսնում Գ. Սրվանձտյանցի «Քրիստոնէական ուսումն Հայաստանեայց Սուրբ եկեղեցւոյ» կրոնի պատմության դասագիրքը՝ հասցեագրված հայկական դպրոցների ուսուցիչներին ու աշակերտներին: Դասագիրքը պատկերազարդ է, կազմված 145 փոքրադիր էջերից: Այն բաղկացած է Ա, Բ, Գ, Դ մասերից, շարադրված է հարց ու պատասխանի ձեւով:

---

16 Անդ, էջ 33:

17 Մանրամասն տե՛ս **Է. Կոստանդյան,** Գարեգին Սրվանձտյանց (կյանքը եւ գործունեությունը), Եր., 2008, էջ 45-47:

18 **Գ. Սրվանձտյանց**, Երկեր, հ. 1, էջ 38:

19 Անդ:

20 Անդ:

«Քրիստոնէականի» հրատարակումը ինքնանպատակ չէր: Այն լույս տեսավ Աբդուլ Համիդի գահակալության առաջին տարիներին, երբ դրվեց սուլթանի հայաջինջ քաղաքականության սկիզբը: Արգելվեց «Հայաստան» բառի կիրառումը, սահմանվեց խիստ գրաքննություն եւ բազմաթիվ սահմանափակումների հետ հայկական դպրոցներից հանվեց նաեւ «Հայոց պատմություն» առարկան:

Առաջաբանում հեղինակը հստակորեն պարզաբանում է դասագրքի նպատակը. «**Սոյն դասագիրքս պատրաստելով, կը յուսամ թէ բաւական դիւրուսոյց է եւ կարեւոր դասեր կը պարունակէ ...Մեզ աւելորդ թուեցաւ դաս մը մանր մունր ուսմունք գետեղել Քրիստոնէականին մէջ, որոնցմէ մանուկ ուսանողն երբէք բան մը չը հասկընար. այլ բաւական համարեցանք բուն հաւատոյ հիմունքը... ընդ որ նաեւ մաս մը Հայաստանեայց եկեղեցւոյ պատմութենէն**»[212]:

«Քրիստոնէականի» Դ մասը (111-145 էջերը) նվիրված է Հայ Եկեղեցու պատմությանը, որտեղ հեղինակը ներկայացնում է նաեւ ժողովրդի պատմության հերոսական էջերը: Խոսքն ուղղելով ուսուցիչներին Սրվանձտյանցը հորդորում է. «**Սակայն դասագիրք մը երբէք արժէք ու արդիւնք չ'ունենար, եթէ ուսուցիչք զայն բարւոք չը գործածեն յուսումն: Այս նուիրական ուսումն՝ որ ամէն ժամանակի մէջ կարեւոր է քրիստոնէի համար, առաւել եւս կարեւորագոյն է ի ներկայս մեր եկեղեցւոյ մանկանց...**»[223]: Պատմական այլեւայլ դրվագների հետ նա անդրադառնում է նաեւ Վարդանանց պատերազմին, հիշատակում է հայոց գրերի գյուտը, պատմում Թարգմանչաց եւ նրանց աշակերտների մասին: Ուսուցողական ակնարկներ կան նաեւ Մովսես Խորենացու, Եզնիկ Կողբացու, Մամբրէ Վերծանողի, Դավիթ Անհաղթի, Եղիշեի, Ղազար Փարպեցու, Անանիա Շիրակացու, Գրիգոր Մագիստրոսի, Հովհան Որոտնեցու, Գրիգոր Տաթեւացու եւ այլոց մասին: Կան հատվածներ Բագրատունիների եւ Կիլիկյան թագավորությունների զարգացման, վերելքի եւ անկման մասին: Կրոնաբարոյական ինքնուրույն արժեքի հետ Գ. Սրվանձտյանցի սույն դասագիրքը ունի նաեւ պատմաճանաչողական որոշակի արժեք:

Ամփոփելով նշենք, որ Գ. Սրվանձտյանցը գրական այն բացառիկ դեմքերից է, որ հավասարապես բարձր է գնահատվել ինչպես ժամանակակիցների, նույնպես եւ հետագա շրջանի գրականության ու մշակույթի տարբեր ասպարեզների հայտնի հեղինակությունների կողմից: Հայագիտության բնագավառում ունեցած ձեռքբերումների համար նա ընտրվել է Պետերբուրգի կայսերական հնագիտական ակադեմիայի պատվավոր անդամ[234]: Մասնակի կրճատումներով «Թորոս Աղբար»-ը թարգմանվել է ռուսերեն, իսկ անգլիացի հայագետ Վրնկերը անգլերեն է թարգմանել նրա «Մանանա»-ն եւ «Համով Հոտով»-ը[241]: Գարեգին Սրվանձտյանցի աշխատությունների մասին ծավալուն գրախոսականներով եւ դրական կարծիքներով հանդես են եկել մեծանուն վիպասան Ռաֆֆին, Ծերենցը, Ղեւոնդ Ալիշանը, Գաբրիել եւ Քերովբե Պատկանյանները, Սեդրակ Մանդինյանը, Գրիգոր Խալաթյանցը, Հովհաննես Թումանյանը, Մանուկ Աբեղյանը, Արամ Ղանալանյանը եւ ուրիշներ:

---

21 **Գարեգին վարդապետ Սրուանձտեանց**, Քրիստոնէական ուսումն Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ, Կ.Պոլիս, 1877, էջ Ե:

22 Անդ, էջ Ե-Զ:

23 Տե՛ս «Էջեր հայ գրականութենէն», հ. Ա, Գահիրէ, 1942, էջ 11:

24 Տե՛ս «Գեանք եւ արուէսպ», Փարիզ, 1940, թ. 5, 6, էջ 71: